տաց հետ սիրան եւս կը մշակեն ու կը լուսաւորեն, ներքին մարդն արտաքին մարդոյն հետ ներդաշնակ թելերով կը կապեն, նոցա հոգւոյն մէջ առաքինութիւն և բարեպաշտութիւն կը սերմանեն, նոցա մատաղ սրտին խորը Հայրենասիրութեան և ազգասիրութեան սրբազան հուրն կը վառեն ու կը բորբոքեն և մարդկութեան բարի և առաքինի քաղաքացիներ կընծայեն։

Բայց յաւէ մեզ ասել, որ այժմ մեր դպրոցները, նա մանաւանդ օրիորդաց դպրոցները, բան մեծի մասին թիւր ու մոլար ընթացից մէջ կը գտնուին. նոցա մէջ փոխանակ հայկական լեզուն ուսուցանելու, մեր յրիստոնեական հաւատոյ անարատ դաւանութիւնը, մեր առաքելական եկեղեցւոյ և ազգի պատմութիւնը, մեր երանելի նախնեաց քաջագործութիւնքն ու փառքը դասախօսելու, օտար լեզուաց քանի մի բառերու թոթովումն կ'ուսուցանեն, և աւելի խաղալու և դաշնամուր զարնելու մէջ կը կրթեն. փոխանակ ուսեալ հայրեր, կրթեալ եւ տանտիկին մայրեր պատրաստելու, իմաստակ և թռուցիկ երիտասարդներ եւ օտարամոլ գերասանուհիներ կը պատրաստեն և զմեզ բարոյական ապականութեան բերանաց անդունդին եզրը կը մղեն, և գուցէ փոքր միւռ եւս դահավէժ կորնչիմք։

Արդ՝ ժամ է սթափելու, ժամ է արթնանալու, այլ եւս պէտք է մեր անտարբերութիւնը ի բաց թողուցեալ այն կորստաբեր դրութիւնն վերի վայր շրջել, մեր դաստիարակութեան և լուսաւորութեան շէնքը պարտաճանաչութեան եւ պարտականատարութեան հաստատուն հիմանն վերայ դնելով և բարոյականութեան պատուանդանի վերայ բարձրացնել. վասն զի մեր ազգի հոգեւոր միութեան միակ կապն ու յոյսը բարոյականութիւնն է. բարոյականութիւնը միայն կարող է մեր ազգի քայքայեալ անդամներն կապակցել, մեր ազգայնութիւնն ամրացնել եւ մեր առջեւ յառաջխաղացութեան լայնածաւալ ասպարէզ բանալ։

Միրելի Հանդիսակիներ, ի վերայ այսպէս ամենայնի պէտք է քաջ իմանամք այս անուտ ճշմարտութիւնը թէ՝ մինչեւ որ մեր ազգը բարոյապէս չը զարթնու, զօրաւորն տկարին ձեռնտու չը լինի, հարուստն իւր լիութեամբն աղքատին պակասութիւններն չը ցուցանէ, ուսումնականն անուսին չը մերձենոյ, նորա խաւարին գաղափարներն չը լուսաւորէ, բարոյականն անբարոյականին օգնութեան չը փութայ, զոյն ապականութեան անդունդէն չը հանէ, մեր ազգի համար չը կայ ոչ միաբանութիւն, ոչ խաղաղութիւն, ոչ ճշմարիտ լուսաւորութիւն, հեռեւապէս և ոչ երջանկութիւն։

Ահա այս ամենն իմանալով՝ մեր ազգի փայթն ու եռանդը պէտք է լինի ուրեմն դպրոցներն բարեկարգել, առաքինական ուղղութեամբ զարգանալ և բարոյական միութեամբ ամրանալ, որով միայն կարելի է պահել մեր երկնային կրօնն ու դաւանութիւնը, մեր մայրենի լեզուն ու Եկեղեցին, մեր ազգային կատարելութիւններն ու գեղեցիկ սովորութիւնները, մեր գոյութիւնն ու ազգութիւնը, և լինել ազգ առաքինի, ազգ կրօնասէր և ազգ երջանիկ։

Մ. Ս. Յովհաննէսեան։

Հետեւեալ ոտանաւորը Կէլիպօլուէն մեզ ղրկուած և սասակի Թախանձանաք հրատարակութիւնը խնդրուած է։

digitised by A.R.A.R.@

ԲԱՆՔ ԱՊԱՇԱՒԱՆԱՑ

Ա՛նհուն անքննելի տրարիչ Աստուած,
Ամեղ անսաւոր եւ անիմացուած.
Ընքոյթ ապաւէն անժամ անկասկած,
Ամենամեղիս անձաւ անարկած.

Բարձրուն՝նակ բարեւոյդ բողոք բիւրոյին
Խառնամ բացագանչ բանիւք բօթոյին.
Հազմաքերդելի ոիծք բոսորոյին,
Իւրաստակեցան բնոցիս բնաւին.

Գլխակոր գնամ գեանաքարշ գործովք,
Դոռոզ գազանին գերեալ գալարովք,
Դերեաց գերեհանդ գթարկեա գլթովք,
Դրրաւեա գրրաւս գլթասէր գրրկօք.

Դատապարտ դրոշմեալ դէտ դատաստանին,
Դժոխոց դիւաց դիւրագաւ դընիմ.
Դասապետրդ դասուց դիւրոցս դիւանին,
Դասեա դաւոցն իմ դասուն դրրժոցին.

Ենթադրեալ եմ եօթնածին երկանց,
Երրի երկիւղի եւս երկբայմանց.
Երկինք եւ երկիր, երամք երջանկաց,
Զմ՝ուկ երգեցէք երկրիս երկրակեաց.

Զառաջայ զաղբեալքս զեղծիւք զանազան,
Օ՛ղբէն զեղիս զանխուլ զուցեմ զրաբան.
Օ՛ղիր զզուանօք զնգամ՝ ի զնգան,
Օ՛երծո՛ զիս զուարթուն, զբրեղդ զօրական.

Լացուցիչ Լնդ էացեալ էից,
Լչօհիմ Լչին էուրթիւնակից.
Լինաբուն Լ՝ երիւք էակից,
Լակցութեամբ էջ էականիս.

Ընթանամ ընթացս ընդ վայր ըղձական,
Ընդվայրակոչկոծ ընկճեալ ընդունայն.
Ընկղմիմ ըղձիւք ըմբռնողական,
Ընկալուչդ ընկալ ըստերիւրականս.

Թակարդ թշնամւոյն թաւալեցոյց թիւր,
Թուլացեալ թողեալ թարթափիմ թափուր.
Թանձրաձայն թառանչ թափեմ թակաւոր,
Թողութիւն թափեա՛ թաքուն թագաւոր.

(Շարունակելի.)

digitised by A.R.A.R.@